[ՌԱՖԱՅԵԼ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ 80-ԱՄՅԱԿԻՆ]

Սիրելի Ռաֆո,

Այսօր խոսքս քեզ հետ է, միայն քեզ հետ: Նույն 1908 թվականին քեզ հետ միաժամանակ ծնվածները կան, թող լինեն, սակայն դու լավ արեցիր, որ մի քիչ շուտ գնացիր, եթե մնայիր, մեկ է չէիր դիմանալու քո սիրելի Սոֆիկի և, մանավանդ, դեռատի դստերդ անժամանակ կորստին: Էն էլ ասեմ, որ քեզ համար մի քիչ շուտ կամ ուշ գնալը վճռական նշանակություն չունի, դու եղել ես, կաս, կմնաս. վայ էն գնացողին, որ մի անգամ գնալով՝ մոռացվում է հավիտենապես:

Սիրելի Ռաֆո, ես քո արածի ու չարածի մասին ոչինչ չեմ ասում, նրանք իրենք իրենց մասին կասեն, և մանավանդ կան որոշ «մոնոպոլիստներ», որ քո մասին ամեն անգամ գրում են, որ <u>քեզ հետ իրե՛նց կապը պինդ լինի:</u> Էն էլ ճամփի վրա են, շուտով նորերը քեզնով կզբաղվեն, գուցե մի նոր խոսք ասեն, որ ձանձրալի չլինի, մի քիչ էլ դիմացիր:

Սիրելի Ռաֆո, եթե դու ապրելիս լինեիր, պարզ է, չէիր թողնի նշեն քո 80-ամյակը: Հիմա էլ, որ չկաս, չեմ կարծում, որ կուրախանաս այս ամենով. չէ՞ որ այժմ այլ ժամանակներ են սառռազդու նոր դեպքերի ժամանակներ, նոր գնահատումների, նոր մեկնաբանումների, նոր վերաբերմունքի ժամանակներ: Դու եթե դեռ լինեիր, խրոխտությունդ կտեսնեինք, չէ որ դարաբաղցին խեղճ չի կարող լինել: Սակայն դու նաև կխեղճանայիր, կկծկվեիր ցավից ու մղձավանջից, կդառնայիր մի բուռ, ինչ փույթ, թե բուռդ բռունցք կլիներ դրության անելանելիությունից, երբ զգայիր, որ փոքր ես, մի բուռ, առանց թիկունքի:

Սիրելի Ռաֆո, ափսոս, որ անտեղյակ ես, գիտեցիր, որ XX դարի սկզբի եղեռնը դեռ շարունակվում է, այս անգամ Սումգայիթում, և ապա քո սիրելի Արցախում-Ղարաբաղում: Դատում են թուրք մարդասպաններին՝ հարյուրից մեկին, այն էլ փոքրերին, մեծերը ազատ են դատ ու դատաստանից՝ չէ որ նրանք միայն կազմակեր-

պողներ են եղել, ոգեշնչողներ։ Ավելի մեծերը կան, որոնք եղելությունը չեն դատապարտում, իսկ ով չի դատապարտում, նա հանցակից է. սա արդեն ճիշտ է՝ մաքուր տրամաբանություն։

Մեր օրերի պատմությունը գրանցվում է ժողովուրդների պատմության մատյանում. նրանց, ում այժմ չեն դատում, պատմությունը կդատի։ Դրանում կասկած չի կարող լինել։ Մենք այսօր վրդովված ենք, ներող եղիր, սիրելիս, որ քո հավիտենական անդորրը խանգարեցի, բայց երևի դրա համար չնախատես։ Եվ այնուամենայնիվ ափսոս, որ չկաս, էս աշխարհում ամեն անհատ իր դերն ունի, իր անելիքը, էլ ուր մնաց քո անելիքն ու քո գործը, առավել ևս քո ձայնը, դու երևի կգոչեիր «էդ ու՞մ վրա եք ձեռք բարձրացնում, հայ ժողովրդին չե՞ք ճանաչում»։ Չեն ճանաչում, սիրելի Ռաֆո, չեն ճանաչում, և այդ վատ է իրենց համար, բայց լավ չէ նաև մեզ համար։

Դե կաց բարով, սիրելիս, այսօր այսքանը։

28.10.1988 Տիրան Մարության [ստորագրություն]

Նկ. 1 – Տիրան Մարությանը (ձախից) և Ռաֆայել Իսրայելյանը: